

«Լոյս տայ ամենեցուն  
որ ի Տանն իցեն»  
Մտք. Ե15:



ԱՄՍԱԹԵՐԹ ՀՅՑ. ՈՒՂ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՓԱՐԻՉԻ ՎԻՃԱԿԻՆ

Թի 2

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1938

# MER DOUNE

BULLETIN PAROISSIAL  
DE L'ÉGLISE ARMÉNIENNE  
DE PARIS.

№ 2 — Décembre 1938

Adresse :

Le Rév. P. Tiran Nersoyan —  
Eglise Arménienne  
15, Rue Jean-Goujon, PARIS (8<sup>e</sup>)  
Tél. : Ely. 67-03

## ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՉԻ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ՆԱՄԱԿԸ

Միրելիներ,

Նախ պէտք է ձեզի յայտնեմ ցնծութիւնս այն ողի-  
ին համար որով ընդունեցաք այս մեր թերթը, նկատե-  
լով զայն մեր Եկեղեցւոյ հոգեւոր գործին բարդաւաճ-  
ման համար առնուած քայլ մը: Ի՞նչքան լաւ է, որ մեր  
մէջ բազում են տակաւին այնպիսի հոգիներ՝ թանկա-  
զին արդարեւ, որոնք մեր Եկեղեցին կը տեսնեն այնպէս՝  
ինչպէս որ է՝ ան իրապէս եւ պէտք է ըլլայ մանաւանդ,  
իր իսկական արժէքին եւ դերին մէջ:

Ծանօթ մտաւորական պատուական տիկին մը կը  
զրէ ինձի. «...Ես միշտ սիրած եմ Հայ Եկեղեցին ու  
հայ կղերը: Եկեղեցին ինձ համար թանկարժէք աւան-  
դութիւն մըն է մեր հին օրերէն մնացած, ու կղերը ա-  
ռաքեալ մը, որ երջանկազոյն կեանքի մը յոյսը կը ներ-  
շնչէ մեզի, որքան ալ ցամքած ըլլան մեր հոգիները:  
Ժան-Կուստօնի «Մեր Տունը» սփոփանք մըն է իմ տարա-  
բուն տունկի հայրենաբաղձ կեանքիս. ինչ որ կը վերա-

բերի անոր՝ նուիրական է: Անհունապէս կը զնահատեմ  
ձեր ձեռնարկը: Գերազանցօրէն զգօն մտքերէ տաաջնոր-  
դուած կրօնական թերթերն են մանաւանդ որ մեր ժո-  
ղովրդին առ հասարակ տարուբեր հաւատքը կրնան ամ-  
բապնդել ու բարոյական բարձրացում պարզեւել ա-  
նոր: ... Ձեր ամսաթերթը կոչուած է սնունդ մ'ըլլալ  
հոգեկան, սնունդ՝ զոր անհրաժեշտ է ջամբել տարազեր  
հայուն՝ որպէս զի չսպառի ծարաւահիւծ...» Նոյնպէս  
ուրիշ մը կը զրէ. «... Բերկրանքով տեսայ զայն, իր  
անունը, սրտամօտիկ ու յարմարազոյն, յենած մեր սի-  
րելի Տունին, Հյոյ. Եկեղեցիին. իր վայելուչ կազմը, եւ  
մանաւանդ իր իմաստալից եւ այնքան սպասուած բո-  
վանդակութիւնը...»: Ու տակաւին ուրիշ ակնիւ հոգի-  
ներէ բազում նման ինդակցութիւններ, երբ եղած գոր-  
ծը դեռ առաջին եւ փոքր ձեռնարկ մըն է միայն: Մեր  
սուրբ հաւատքը, դեռ կը կայծկլտայ ան շատ շատերու  
կուրծքերուն տակ:

Կ'ըսուի ինծի, եւ շատ իրաւունքով, որ պէտք է աւելի ընդլայնուի «Մեր Տունը» ծաւալով. եւ յետոյ՝ պէտք է Փրանսերէն բաժին մ'ունենայ, Փրանսախօս հայերուն համար, որոնք ստուար են այս գաղութին մէջ, եւ կը ստուարանան արագ:

Շատ լաւ. բայց կը յիշէք ինչ որ ըսի նախորդ նամակիս մէջ: Եթէ կըրցողները սատարեն՝ անշուշտ կ'ընանք դիւրաւ եւ շուտով տասնեակեց երես ընել զայն: Բայց 16 երեսէն աւելի գործի մը համար այժմ կանուխ է: Նախ վասնզի անիկա կը հանէ «Մեր Տունը»-ն իր փիճակային թերթի հանդամանքէն: Եւ յետոյ՝ համաեկեղեցական զեր մը կ'ստարելու կոչուած՝ ունինք Ս. Երուսաղէմի Արամ ամսաթերթը, զոր կը յանձնարարենք որ մեր ժողովուրդը կարգայ \*): Իսկ Փրանսերէն բաժինն համար վարձաւ ծախքի ինդրէն գատ՝ կայ նաեւ կրօնական ուսում ունեցող ձեռնհաս գրողի մը պէտքը, զէթ մինչեւ ստեն մը...

Պէտք ունինք Եկեղեցւոյ շուրջ կեանք ստեղծելու — ինչպէս կ'ըսուի սօվորարար — քրիստոնէական հոգիով, պէտք ունինք Աստուծոյ զպրօցին մէջ կրթուելու, եւ Եկեղեցին կենդանի գործօն մը դարձնելու: Դէպի հոգեկան կատարելութիւն ճամբորդութեան մը սկսելու ենք: Ճամբան փշոտ է, տղիտութեան, անտարբերութեան եւ չարութեան խոչընդոտները յառաջացումը տաժանելի դարձուցած են: Դժուարին կացութիւն մըն է մեր գաղութինը. եւ բազմազան են պատճառները աւտոր հոգեւոր խոտանացումին — լաւ գիտէք ամէնքդ:

Բայց վերջապէս պէտք է շարժիլ, «եռալ հողով» ինչպէս կ'ըսէ քանիչելի կերպով Առաքելը: Մեռնելու չէ հոգեկան կեանքի ծարաւէն. ստուար չենք աշխարհի ցուրտէն: Զէ՞ք գղար ամէնքդ այ այս պէտքը: Եւ անոնք որ կը զգան, կը զգան պէտքն հոգիի կեանքին, պատրաստ են զինուորագրուիլ հոգեկան նուաճումի փոքրիկ բանակի մը, «պնդեալ դմէջս ճշմարտութեամբ, զգեցեալ զգրտհսն արդարութեան», (Եփս. 2:13-17), հագած «փրկութեան սաղաւարտ», առած «հոգիին սուրը», խիզախելու համար դէպի վեր: Փոքրիկ, շատ փոքրիկ բանակ մը, որ ահայն հոգիով մեծ ըլլայ: Կ'ուզէի լսել թէ այսպիսի զուգարտակի մը կամաւոր գրուելու պատրաստ եղողներ կա՞ն, եկեղեցւոյ դրօշակին ներքեւ: Կը կարծէ՞ք թէ «անապատին մէջ ձայն» պիտի մնայ այս նուաղ ձայնը:

Յուսալով որ ջնայ՝ — ես պիտի ջանամ որ ջմարի անիկա — մնամ անձնուէք սիրով եւ օրհնութեամբ՝ աղօթարար

ՏԻՐԱՆ ՎՐԴ. ՆԵՐՍՈՅԵԱՆ:

\*) Բաժնեցիին 6 շիլիմ կամ 54 ֆր. հասցէ՝

« Sion », Patriarcat Arménien, Jérusalem (Palestine).

## ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԵՄԷՆ

ԱՂՕԹՅԻ ՄԱՍԻՆ

Նյմ. 20, կիրակի օրը Ս. Յվհ. Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ խօսուածին ամփոփումն է հետեւեալը:՝  
ՂԿՄ. ԺԱ. 1:

Աղօթելը արուեստ մըն է, եւ ամէնէն դժուարը թերեւ արուեստներուն: Ո՛չ թէ ամէն մարդ, այլ մինչեւ իսկ ամէն քրիստոնեայ կարող չէ աղօթք ընել՝ այս բանն անելով իր իսկական եւ խորունկ իմաստին մէջ: Այս հոգեւոր արուեստին տիրանալու համար տարիներու տաժանագին աշխատանք եւ կրթութիւն պէտք է: Մեծագոյն Հայրերը Եկեղեցւոյ, հոյակապ գործի մարդիկ, ինչպէս Բարսեղ, Ոսկեբերան, Ս. Մեսրոպ եւ գրեթէ բոլորը, գործունէութեան ասպարէզը չնետուած՝ տարիներով աղօթելու զպրօցը գացած են առանձնութեան մէջ, որպէսզի իրենց հոգիին կապեն աստուծմէ ուժ փոխանցող թելը:

Բայց այսուհանդերձ ամէն քրիստոնեայ պէտք է աղօթէ. առանց ատոր քրիստոնեայ ըլլալ պարզապէս անկարելի է: Բայց դիտէ՞ք աղօթել. յաճախ նչ. ուրե՞մն: Թող պատասխանէ առաքեալը. «Հողին կը հասնի եւ մեր սկարութեան թեւ թիկունք կ'ըլլայ, վասնզի չենք դիտեր թէ ի՛նչ եւ ի՛նչպէս արժան է աղօթել: Բայց մեր սովորունչ հեծութիւններուն մէջէն Հողին կը խօսի Հօր Աստուծոյ. եւ Աստուած որ կը քննէ սիրտերը եւ մտքերը, գիտէ թէ ի՛նչ ըսել կ'ուզէ աղօթողը» (Հոմ. Ը 26): Կարեւորը հետեւաբար՝ դէպի վեր՝ դէպի Աստուած ձգտումի զպացումն է, եւ այդ է արդէն աղօթքը:

Շատ մ'անմիտներ եւ սուտ զարգացեալներ՝ երբ «աղօթք» բառը լսեն՝ քմծիծաղ մը կ'ունենան: — Աստուած քանի՞ ականջ ունի այս չափ խնդրանքները լսելու համար: Քանի՞ լեզու գիտէ: Զայները ինչպէ՞ս երկինք կը հասնին: Եւ յետոյ տակաւին աղօթքները լսուած ունի՞ն: Եւ ասոնց նման պարապ խօսքեր, որոնք ողորմելի տղիտութիւն մը կը յայտնեն քան թէ լուրջ մտածողութիւն:

Աղօթքը մարդուն մարդէն բան մ'ուզելուն չի նմանիր: Անիկա մխրճում մըն է բարձրագոյն իրականութեան մը մէջ: Անոր ամէնէն մօտ պատկերը՝ փոքրիկ, սկար տղեկի մը սքանչացումով, մատահոլութեամբ, սիրով, պաղատանքով իր ծնողքին նայելն է, ինքզինքը աշուտ քակուելու համար՝ հոտեցնելով անոնց հոգիին մէջ եւ անոնցմէ եկած մխիթարութիւնն ու քաջութիւնը ըստանալով իր մէջ. իր եւ իր ծնողքին հոգիին մէջ հոտուն ջրանցք մը բանալով, անոնց հետ իր վարէն վեր միու-

Թիւնը իրապէս զգալով: Ծնողքին եւ փոքր զաւակին այս հոգեկան կապը սակայն արգելք չէ որ ծընողքը իր փոքրիկները կրթէ այնպիսի կերպերով որոնք թէ՛ ցաւալի եւ թէ՛ անհասկնալի են անոնց յաճախ: Կը բաւէ որ սղեկը իր հօրը կամ մօրը նայի այնպէս ինչպէս պէտք է նայի: Այդ կը նշանակէ որ բնականոն մեծութեան ճամբան բռնած է:

Բայց տղեկը կը նայի իր հօրը՝ իրրեւ Ամէնէն Մեծին, որովհետեւ ինք տկար է, տղէտ է, Ամենամեծին պէտք ունի: Եթէ տղեկը այդ պէտքը չզրկայ՝ կորսուած է, իհարկէ: Արդ, մարդուն հոգեկան մեծութեան եւ ղորութեան համար ալ, այս պատկուածեան եւ տկարութեան զգացումը անհրաժեշտ է: Պարագուս է այս չէ՞: Բայց ճշմարտութեանց ամէնէն մեծերը պարագուսով կ'արտայայտուին:

Տկար եւ մեղաւոր ըլլալը գիտնալը, — վասնզի իրականութիւն է այն — աղօթելու առաջին եւ վերջին պայմանն է: Ո՛չ թէ միայն աղօթելու այլ քրիստոնեա՛յ ըլլալու: Ո՛չ թէ միայն քրիստոնեայ ըլլալու, այլ մա՛րդ ըլլալու առաջին եւ վերջին պայմանն է:

Ո՞վ եթէ ծարաւ չզգայ ջուրի հետամուտ կ'ըլլայ: Բայց չկա՞ն որ անսպասելի մէջ կը պտուտքին եւ ծարաւէ կը մեռնին, որովհետեւ ճամբան չեն գիտեր: Քրիստոնէութիւնը նամբան է կեանքի: Տէրը այսպէս բաժնէ եւ աղօթելը քրիստոնեայ ըլլալ ըսել է:

Անոնք որ չեն ճանչնար աղօթքը, երբ եկեղեցի են կ'ըսեն «երկա՛ր է, շատ է, աւելորդ է», եւ: Որո՞նց կը նմանին ասոնք. անո՞նց, որոնք երաժշտութիւնը չեն հասկնար, զայն չեն ճաշակեր բայց երգահանդէս այնուհանդերձ կ'երթան (կը ճանչնաք անշուշտ այս տեսակ մարդեր), գացած ըլլալու համար... յօրանջելու կամ տրոնջալու: Երբ երաժշտասէր մը երաժշտին զգացումներուն ուկիւններն մէջ կը լողայ ունկնդրութեան առեւն, կը ճանճրանա՞յ: Ոչ: Կը յոգնի, ի հարկէ, որովհետեւ տկար էակներ ենք, մեր ջղերը դիւրաբեկ են: Բայց յամենայն դէպս իր տկարութիւնը կը ճանչնայ փոխանակ երաժշտութիւնը բամբասելու:

Աղօթքը, այսպէս, Աստուծոյ հոգիին մէջ մխրճուելն է: Կը փոխէ, կը նորոգէ անիկա մարդը:

Առաքեալները, հաւատարիմ Իսրայելացիներ, իրենց մանկութենէն ի վեր աղօթած էին: Ժամ գացած եւ իրենց ուրբերներուն աղօթքը ամէն շաբաթ լսած էին: Իրենց ծնողներէն աղօթել սորված էին: Բայց երբ օր մը տեսան Քրիստոսը, որ մեկուսի տեղ մը կ'աղօթէր, այնպիսի հոգի մը տեսան Անոր վրայ, այնպիսի զօրու-

թիւն մը բխեցաւ Անկէ, որ բնաւ աղօթք չըրած եւ չըրած մարդերու պէս — ինչպէս իրապէս էին — պաղատալին մօտեցան Տիրոջ: «Տէ՛ր, մեզի աղօթե՛լ սորվեցուր»:

Եւ Տէրը սորվեցուց: Անոնք ալ մեզի սորվեցուցին եւ կը սորվեցնեն: Բայց մենք նման ենք աշակերտներու՝ որոնք զարոց կ'երթան եւ փոխանակ բան սորվելու՝ վարժապետին քիթին, սեղանին սաքին, տնտեսի տակին մասին ղիտողութիւններ ընելով եւ դժո՞հաւ թիւններ յայտնելով ժամանակ կ'անցընեն: Երբ ժամանակը կ'անցնի... երբ վախճանը կը մօտենայ...:

Ի՞նչ կ'ըսանք ընել՝ եթէ ոչ պաղատել Աստուծոյ առաքեալներուն պէս. «Տէ՛ր, ուսո՛ մեզ յաղօթա կալ»:



## ՀԱՅԱՍՏՆԵԱՅՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

ԻՆՉ ԸՐԱԻ ԾՆՈՐՀԱԼԻ

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Բաղմաթիւ են եղած եւ արդիւնաշատ՝ Ծնորհալիի (1100, կթղ. 1166, +1173:) ծառայութիւնները մեր Եկեղեցիին: Անոնց մէջ նշանակելի տեղ կը բռնեն սրբազան քերթողութեան եւ երաժշտութեան մասուցած արուեստի իր զեղեցիկ տուրքերը:

Գծուարին ժամանակի մը մէջ, որպիսին էր իրը՝ արիւարար ձեռք առաւ ան եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը: Ջանաց ներսէն զօրացնել Հայ Եկեղեցին, որքան հրապուրել՝ նոյնքան եւ դաստիարակիչ ընծայելով եկեղեցական արարողութիւնները:

Ստոյգ է որ Ծնորհալիէն առաջ Հայ Եկեղեցւոյ մեծ բարեկարգիչներ եղած են Ս. Սահակ Պարթեւ, Ս. Յովհանն Մանդակունի, եւ Յովհանն Օսնեցի: Ստոյգ է թէ այդ մարդին մէջ աննշան չեն եղած Վրթանիս, Երբ եւ Ներսէս Ծիլնոյ Հայրապետները, բայց նկատի ունենալով յիշեալներուն անուով մեզի ծանօթ ժամակարգութեան մասերը՝ պարտինք մեծագոյն բաժինը նկատել Ծնորհալիինը, որ մեծ եղած է, զանակաւոր եւ տեւական՝ իր որակովն ու քանակովը միանդամայն:

Ծնորհալին աւելի յառաջացած դարու մարդն էր, եւ իր կեանքի ասպարէզին մէջ աւելի շատ տոխթներ ունեցած էր մօտէն գաղափար կազմելու քոյր եկեղեցիներու աստեղութեանց վրայ, զերծ ամէն նախապաշար-

րում է՝ ան նկատեց որ մեր «անապատներուն» (=վանք) ինչպէս նաեւ ժողովրդական եկեղեցիներուն մէջ կատարուող արարողութիւններուն միօրինակութիւնը ձանձրոյթ կ'առթէին, եւ փորձեց դարմանել դայն:

Եւ Ծնորհալին իր երկնատուր ձիրքերով բացաւ իր միւսոնարոյր շրթները՝ օրհներգելու համար Աստուծոյ արարչական զօրութիւնը, շարժել իր փետուրը նկարագրելու համար տնօրինութիւնները «Այլ անուն Յիսուս»ին, թրթռացուց լարերն իր քնարին՝ ներդրելու համար իրենց Փրկչին եւ հայրենի սրբութեանց հաւատարիմ մեր ցեղի կարմիր Նահատակները եւ անոնց քաջութիւնները:

Ասոր համար՝ ան մերթ սուգեցաւ խորերն իր հոգիին, եւ ապա սլացաւ դէպի բարձունքը երկինքին, Ստեղծողին ընծայելու իր որսացած մարգարիտներն անդին, իբր նշան իր դերազանց սիրոյն, իր անասան հաւատքին, իր անսուտ յոյսին:

Ծնորհալի հրաշալի յաջողութիւնն ունեցաւ Հայց. Եկեղեցիին նոր հրապոյր մը տալու, անոր վրայ հայկական հաւատքին զեղեցիկ արտայայտութեան բնիկ դրոշմը դնելու: Երկարածիւ սաղմոսները փոխանակեց զմայլելի շարականներով. արարողական միօրինակութիւններովը պէսպիսաւորեց, եւ իր կարգադրութիւնները ժամանակի ընթացքին կանոնական հանգամանք ստացան:

Տօնացոյցին մէջ՝ Հողեղալստեան տօնը՝ եօթնօրէքի, եւ Վերափոխման տօնը իննօրէքի վերածեց (Տնց. տպիր. Երուսաղէմի, 1910, էրեսք 177, 250):

Ժամագիրքի եւ Եարականի մէջ հետեւեալներն են իր ներմուծումները.:

«Այսօր Անճառ»ը. Մեծ Պահոց Կիրակիներու զմայլելի «Օրհնութիւնները». «Յիշեցուք»ը. «Առաւօտ լուսոյն». «Աշխարհ Ամենայն»ը. «Աստուած Անեղ»ը. «Արարչական»ը. խաղաղական ժամուն «Նայեաց սիրով»ը. «Ի Քէն հայցեմք»ը եւ Արեւազալի ժամուն բոլոր երգերը:

Հայ հաւատքին եւ հայրենեաց ախոյեան սուրբերուն Վարդանանց եւ Ղեւոնդեանց նուիրուած սքանչելի շարականները, «Նորահրաջ». «Արիացեալք». «Անճառելի»:

Ս. Գրիգոր Տաթեւացի Ծնորհալի կ'ընծայէ նաեւ՝ Աւագ օրհնութեանց վառ ձեռքներ, Հրեշտակապետաց, Եօթանասնից եւ Նինուէացոյց օրհնութիւնները. Հոգեզալստեան, Վարդապառի եւ Վերափոխման երկրորդ պատկերները: Նոյնպէս՝ Ծաղկաղարդի Հարցը, Մարգարէից եւ Յովնանու չորրորդ ձայն Հարցերը, Ս. Յակոբ Մծբնայ օրհնութիւնները, «Յաղթող եւ Ս. Հայ-

րապետ» (Գիրք Հրցմ. էրես 637):

Կիրակոս Գանձակեցի կը գրէ Ծնորհալիի համար թէ «սա՛ արար զբարոզ Ս. Պատարագին՝ քաղցր եղանակաւ» (էրես 68): Արդեօք Գանձակեցի «Քս. ի մէջ մեր յայտնեցաւ»ի<sup>օն</sup> կ'ակնարկէ, թէ ուրիշներու ալ:

Ծնորհալի աւանդած է մեղի նաեւ Հանդատեան ժամու «Հաւատով խոստովանիմ» աղօթքը, օրուան 24 ժամերուն համար 24 տուն: Այս աղօթքը Ս. Եփրեմի բարեպաշտական գրքերէն մէկուն ամփոփումն է, սահմանափակ ըսուելու գործի կամ ճամբորդութեան, կամ ո եւ է ատեն: Պարզ եւ սրտազեղ աղօթք մը, որ մարդուն ամէն ինչը անքնները կը պարունակէ:

Յանկը պիտի շատ երկարէր տակաւին՝ եթէ յիշուէին Ծնորհալիի գրած տաղերը, մեղեդիները եւ գանձերը, որոնց եղանակներն ալ կ'ըսուի թէ ինք յօրինած է:

Այսօր որոշապէս չենք գիտեր թէ Ծնորհալիէն առաջ ինչ ձեւ ունէր հասարակաց աղօթքի կարգաւորութիւնը: Եթէ պահ մը մէկ կողմ դնենք Ծնորհալիէն ներմուծուած մասերը, պիտի տեսնենք թէ պաշտամանց կարգաւորութիւնը կը խանգարուի: Ասկէ կրնանք հետեւեցնել թէ Ծնորհալի կարգ մը մասեր, որոնք որակով բարձր չէին, վերցուցած՝ եւ անոնց տեղ լաւագոյնները գրած պէտք է ըլլայ: Ուրեմն Ծնորհալի ծանրաբեռնած չէ Հայց. Եկեղեցոյ պաշտամունքը. հակառակը հաւանական է:

Ժամերգութեանց պատշաճները բարեփոխելու համար Ծնորհալի քմահաճոյքէ չէր որ տարուեցաւ: Ուսումնասիրեց ան կանխաւ Թեղեհեաց եւ Մաքենոցաց վանքերուն կանոնները, եւ անոնց համաձայն կազմեց Խրատ ժամատեղեաց մը:

Օրմանեան Սրբադան կը գրէ. «Հնար է ենթադրել, ստանց պատմական ստուգութեանց դէմ դացած ըլլալու, որ Ծնորհալին իւր ամէն գրածները պարտաւորիչ չհնչակեց, այլ հանդիսութեանց շքեղութեան համար պատրաստուած յաւելումները նմանողութեան նախանձայնութեամբ եւ ժամանակաց հոլովմամբ պարտաւորիչ դարձան Ծնորհալիի կամքէն ու հրամանէն անկախաբար» Ազգապատում մ. Ա., էրես 1140): Նոյնն էր շարժիքը Եղիշէ Պատրիարքի:

Ծնորհալիի ոգին իր օրերէն մինչեւ այսօր եւ պալիք ժամանակներուն կը սաւառնի հայ կաթողիկէներու սուրբ ոլորտին մէջ. անով հայկական պաշտամունքը նոր ոգի առած եւ փարթամ բոյրերով աւելի դիւթական դարձած է:

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՐԳՈՒՍԱՐՔԷՆ**

ԹԵ ԻՆՉ ԿԵՑՈՒԱԾՔ ՈՒՆԵՆԱԿՈՒ Է  
Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Մեծ առաքեալը Ս. Պողոս կը գրէր իր Տիմոթէոս աշակերտին. «գիտացե՛ս որպէս պարտ է շրջել քեզ ի Տան Աստուծոյ, որ է եկեղեցի:»

Նոր բան մ'ըսած պիտի չըլլանք յիշեցնելով թէ ամէն քրիստոնէի տարրական պարտականութիւնն է եկեղեցւոյ մէջ վայել կեցուածք ունենալ: Այս տեսակէտէ շատ թերութիւններ ունինք — հարկադրուած ենք խոստովանելու: Օրինակի համար. Սուրբ պատարագի ամէնէն վեհ եւ խորհրդաւոր պահուն, այսինքն «Սուրբ Սուրբ»էն մինչեւ «Հոգի Աստուծոյ»ի վերջը, յաճախ կը տեսնուի որ շատեր, շատ անգամ պզտիկներու ընկերակցութեամբ եւ ձայն հանելով՝ մոմ վառելու կ'երթան, կամ խոստովանանքի համար քահանայ կը հրաւիրեն, կամ ուրիշ խանդարումներու պատճառ կ'ըլլան: Մինչդեռ օրէնք է եւ վայել է որ այդ միջոցին հաւատացեալը ինքնամոփոխուած, ներշնչուած եւ հոգեով ու մտքով վերացած՝ դամուրի մնայ իր տեղը եւ աղօթէ ջերմեռանդօրէն:

Ուրիշ տեղ անկարգութիւն մըն է եկեղեցւոյ մէջ խօսակցիլը. անկարգութիւն՝ որմէ ցաւալի է ըսել մինչեւ իսկ եկեղեցւոյ պաշտօնեաները զգոյշ չեն, հաւատացեալներէն նախանձախնդիր անձերու գիտողութեանց տեղի տալու աստիճան:

Տակաւին ուրիշ դայթակղեցուցիչ տեսարան մըն է այն անկանոնութիւնը՝ որ կը տիրէ հաղորդուողներուն մէջ, երբ տօնական օրեր Սուրբ Սեղանին կը մօտենան անոնք: Զիրար կը հրեն, կը հրմշտկեն, վայրկեան մ'առաջ գործերնին վերջացնելու անիմաստ ու անպատեհ գիտաւորութեամբ: Մինչդեռ պէտք է հաւատացեալը ասիւ եւ դողութեամբ մերձենայ սուրբ խորհուրդին, եւ պէտք չէ ոեւէ դինով ոսնհարէ նուիրականութեանց նկատմամբ պատկառանքը եւ օրինապահութիւնը: Կանոն է որ այր մարդիկ կ'ինքերէն առաջ անցնին, եւ կարգով աջէն զան եւ ձախէն երթան, եւ սպասեն սեղանէն ոչ շատ հեռու դասին մէջ՝ մինչեւ որ քահանայն «Կեցո՛՛ն ըսելով օրհնէ հաղորդուողները:

Ասոնք սրբագրելի եւ պէտք է ըսել փոքր թերութիւններ են, որոնք սակայն մեծ տեղութիւններ յառաջ կը բերեն: Պէտք է խղճմտութիւնը եւ ողջմտութիւնը ունենանք զանոնք չգործելու: Երբեմն եկեղեցիներ կան ուր հազարաւոր բազմութեան մէջ կը տիրէ պատկառազու լուծիւն. չըուկ մը չի լսուիր սրբավայրին վեհութիւնը խանդարող: Անհրաժեշտ է որ ամէն հաւատացեալ իրեն հետ եկեղեցիէն ներս մտցնէ կար-

**ԲԱՐԵՒՆ**

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐՈՒ «ԲԱՐԵՒՆ»Ը

«Բարեւ» բառը զոր աշխարհականները կը դործածեն թէ՛ իրրեւ ողջունելու առաջին ձեւ եւ թէ՛ իրրեւ անոր պատասխան՝ կը վերաբերի օրուան (եւ տարուան) բոլոր ժամանակներուն: Եւրոպացիներ չունին ընդհանուր այս ձեւը: «Բարեւ» անշուշտ «բարի» բառին դործիական հոլովն է, կը ճատուամը ըլլալով «բարեաւ» գըրաբար ձեւին: Կը նշանակէ. «մեր հանդիպումը բարի գրացումով է, կամ ըլլայ» եւ կամ՝ «մեր հանդիպումը բարի է, կամ ըլլայ, անկէ բարիք յառաջ դայ, կամ անոր պատճառը բարի է», եւայլն:

Իբրեւ մասնաւոր ժամանակներու յատկացուած բարեւի ձեւեր՝ ունինք «բարի լոյս»ը, սքանչելի խօսք մը, որ կը համապատասխանէ Եւրոպացւոց պօսիժուրին, եւ որ կը նշանակէ «օրուան լոյսը մեզի բարիք բերէ, կամ լոյսը բարի է»: Եւ ի՛նչ գեղեցիկ է լոյսը բարի կոչել, ո՛չ միայն Փիղիքական լոյսը, այլ նաեւ հոգեւոր եւ մըտաւոր լոյսը, որ Քրիստոս է, որ ըսաւ «Ես եմ լոյս Աշխարհի»: «Բարի լոյս»ով՝ ճշմարիտը որուն խորհրդանշանն է լոյսը, բարիին կը կապուի, եւ կրօնական խորհուրդ մը կը հաստատուի:

Ունինք «բարի իրիկուներ», Եւրոպացւոց մէջ՝ պօսիստաւ, որ նշանակէ՝ իրիկուներ բարի ըլլայ, մութը որ կուզայ՝ մեզի չարիք չբերէ:

Ունինք «բարի գիշերը» կամ «գիշեր բարին», որ կը նշանակէ՝ «գիշերը բարի ըլլայ, առանց չարիքի անցնի»:

Թէ «բարեւ»ին եւ թէ միւս աշխարհականէ աշխարհական բարեւի ձեւերուն պատասխանն է՝ «Աստուծոյ բարին», որ կը նշանակէ թէ «բո՛ւն բարին՝ Աստուծմէ եկած բարին է, ամէն բարի բան Աստուծմէ է, եւ կը մաղթեմ որ աստուածային բարիքով օժտուիս»:

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ «ԲԱՐԵՒՆ»Ը

Գալով հոգեւորականներու «բարեւ»ին, զանոնք իրենց աստիճանին համաձայն պէտք է բարեւել զանազան ձեւերով:

Տարբեր ըլլալով գրեթէ միւս բոլոր Եկեղեցիներէն՝ Հյո. Եկեղեցիին մէջ հոգեւորականները բարեւելու եւ անոնց բարեւը ընդունելու յատուկ ձեւեր կան:

Ամուսնացեալ քահանայն պէտք է բարեւել՝ ըսելով «Օրհնեա՛՛ Տէր»: Ասիկա խնդրանք մ'է քահանայէն

դասպահական ոգին, եւ ինք այդ ոգին ունենալէ զատ՝ ջանայ ուրիշներու ալ հաղորդել զայն:

ՎԱՀԱՆ Ա. ՔՀՆՅ. ԽՈՅԵԱՆ Աւագիբէց

որ սա օրհնէ բարեկողը, այսինքն Աստուծմէ անոր համար շնորհքներ եւ բարիքներ խնդրէ: «Օրհնեա Տէր»ին քահանան կը պատասխանէ ըսելով, «Աստուած օրհնեցե՛ք» կամ աշխարհարար ձեռով՝ «Աստուած օրհնէ», որ կը նշանակէ: «Աստուած տայ քեզի խնդրածդ բարիքը եւ շնորհքը»: Իսկ երբ բարեւը կը տրուի մէկէ աւելի քահանաներուն՝ պիտի ըսուի «օրհնեցէք Տէր Հարք», ի հարկէ նոյն իմաստով:

Երբ քահանան ի՛նք է՝ որ առաջին անգամ կը բարեւէ՝ կ'ըսէ «ողջոյն» կամ եթէ մէկէ աւելի են իր բարեւած անձերը՝ «ողջոյն ձեզ», որ կը նշանակէ՝ «առողջութիւն, հոգեւոր եւ մարմնաւոր կենդանութիւն, կատարելութիւն ունենաք»: Ասոր աշխարհականը կը պատասխանէ ըսելով «օրհնա Տէր», որուն իմաստը տուինք վերը:

Իսկ երբոր բարեկողը կ'ուսակրօն եկեղեցական է՝ եւ դիմացինը աշխարհական է՝ կ'ըսէ դարձեալ «ողջոյն» կամ «ողջոյն ձեզ», վերոյիշեալ իմաստով: Բայց կուսակրօնի (վարդապետ կամ եպիսկոպոս կամ պատրիարք կամ կաթողիկոս) բարեւի կամ «ողջոյն»ին ո՛չ թէ «օրհնեա Տէր» է պատասխանը այլ «Աստուած օգնակաւ», որ կը նշանակէ՝ «քու բոլորանուէր հոգեւոր գործիդ մէջ, որով քու անձդ կը գրկես, աշխարհէ հրաժարելով Աստուծոյ արքայութեան համար, Աստուած քեզի օգնական ըլլայ»:

Երբոր աշխարհականն է որ առաջին անգամ կը բարեւէ՝ դարձեալ պիտի ըսէ «Աստուած օգնակաւ», նոյն իմաստով: Ասոր հոգեւորականը կը պատասխանէ ըսելով՝ «Աստուած պահապան», որ կը նշանակէ՝ «Աստուած պահէ գրեց այն փորձանքներէն՝ որոնք կան աշխարհի վրայ, որուն մէջ կ'ապրիս դուն»:

Երբոր աշխարհական մը կ'այցելէ հոգեւորական մը, թէ՛ իր այցելութեան սկիզբը եւ թէ՛ մեկնումի պահուն նոյն բարեւի բանաձեւերը կը գործածէ: Իսկ երբ հրաժեշտ կ'առնէ եպիսկոպոսէ մը՝ կամ պատրիարքէ կամ կաթողիկոսէ՝ պիտի ըսէ. «Ծառայ եմ Սրբազան Հայր» կամ եթէ կաթողիկոս է՝ «Ծառայ եմ վեհափառ Տէր», որ կը ցուցնէ խոնարհութեան դպացում մը, եւ այն մտածումը՝ թէ եպիսկոպոսը եւ անոր բարձր աստիճաններն ունեցողները Եկեղեցւոյ իշխաններ են, որոնց հոգեւոր տեսակէտով հպատակներն են բոլոր հաւատացեալները:

Իսկ եկեղեցականը երբ հրաժեշտ կ'առնէ տունէ մը՝ փոխանակ «ողջոյն»ի՝ կ'ըսէ «մնացէք խաղաղութեամբ», որ կը համապատասխանէ «մնաք բարով»ին:

## ՓԱՐԻՉԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԵԱՆՔԷՆ

Մ Ե Ր Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ի Ն Ի Ն Կ Ա Ս Տ Ռ Ա Ջ Մ Ի Կ Ն Ե Ր Ո Ւ Հ Ա Մ Ա Ր

Մեծ Պատերազմի զինադադարին տարեդարձին առիթով նյմ. 13ին հանդիսաւոր սուրբ պատարադ մատուցուեցաւ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ Հզւ. Տեսչի Փոխանորդին կողմէ, Համաշխարհային Պատերազմի ընթացքին զանազան ճակատներու վրայ ինկած հայ կամաւորներու հողույն համար: Ճրանասայի Նախկին Կամաւորներու Միութեան անդամները իրենց զինքի ընկերներու յիշատակը պատուելու եւ անոնց համար աղօթելու համար ներկայ էին պատարագին: Նոյն Միութիւնը հրաւէր ուղղած էր նաեւ Փրնս. նախարարութեանց եւ զինուորական իշխանութեանց՝ որոնք զրկած էին իրենց ներկայացուցիչները, բարձրաստիճան պաշտօնեաներ եւ զինուորականներ բոլորն ալ, որոնք Փրնս. կառավարութեան կողմէ իրենց յարգանքը մատուցած եղան իրենցներուն կողքին ինկած հայ զինուորներու յիշատակին:

Պատարագիչ Հայր Սուրբը դրաւ որէ ընթերցմամբ տուաւ քարոզը Փրանսերէն լեզուով: Յիշեց մշակութային եւ հոգեկան այն կապը՝ որ Սաչակիրներէն ի վեր գոյութիւն ունեցած է, եւ հասարակաց զոհողութեամբ եւ իր կարեւոր մէկ պաղուծին բնակակցութեամբ այնքան մօտեցուցած է Հայութիւնը Ճրանասականութեան: Ըսաւ թէ քրիստոնէութեան համար խորշիլի եղող պատերազմ ըստած բանը, այնուհանդերձ տխուր անհրաժեշտութիւն մըն է, ներկայ աշխարհին մէջ, միջազգային յարաբերութեանց անկատարութեան հետեւանքով, ուր մարդկութիւնը իր մեղքերուն փոխարէն ծանրօրէն կը պարտաւորուի վճարել իր տուգանքը արիւնով: Հայ ռազմիկները կը հաւատային թէ իրենք կը կուռէին հոգեկան արժէքներու եւ արդարութեան համար: Անոնք չստանան արդարութիւնը: Բայց իրենց մահը ապացոյցն է իրենց հաւատքին յաղթանակին նախ իրենց անձերուն եւ ապա իրենց վրայ հիացողներուն հոգիներուն վրայ եւ հոգեկան յաղթանակը բուն յաղթանակն է: Յիշեց Առաքեալին խօսքը. «Ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանիլ շահ» (Փղպ. Ա. 21): Փակեց մաղթելով որ անոնց, նրնջեցեալներուն, եւ մեղի համար շահ մ'ըլլայ անոնց զոհաբերութիւնը:

Պատարագէն վերջ հայկական ճաշարանի մը մէջ Կամաւորներու Միութեան կողմէ պատրաստուած հուղեճաշին Հզւ. Տեսչի փոխանորդը զլիաւոր հիւրն էր՝

Արժ. Տ. Վահան քհնյ. Սոյեանի եւ ուրիշ ազգերու կամաւորներու Միութեանց ներկայացուցիչներուն եւ ազգայիններուն հետ:

**ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԱՀԱՆՈՒՄ**

Ծանօթ մտաւորական եւ երգահան Պր. Օննիկ Պէրպէրեանի պատարազի երգահանդէսը, որուն մասին խօսած էինք անցեալ ամիս, տեղի պիտի ունենայ Սալ կափոյի մեծ սրահին մէջ յառաջիկայ դէպ. 29 ԵՂ. օր, ժամը 21ին: Պիտի երգէ Փարիզի ուսական Մայր Եկեղեցւոյ Հանրաձայնօթ երգչախումբը հեղինակին ղեկավարութեամբ: Կը մասնակցին ծանօթ հայ երգիչներ: Այս երգահանդէսին նախաձեռնութիւնը յանձն առած է Կոմիտասեան Յանձնաժողովը. իսկ կազմուած է Պատուոյ Յանձնախումբ մը, գլխաւորութեամբ Փարիզի Տիկնանց Միութեան, որ կը հովանաւորէ երգահանդէսը:

Հողերու եւ գեղարուեստական այս թանկագին վայելքը ուրախ ենք որ պիտի ունենայ մեր ժողովուրդը:

**ԵՐԿՈՒ ԹՈՒԱԿԱՆ**

Դէպ. 4ի, ինչպէս նաեւ 26ի կիրակիներուն Սուրբ Պատարազը հանդիսաւորութեամբ պիտի երգուի ընկերակցութեամբ երգեհոնի: Առաջին թուականին՝ մեր Առաջին Լուսաւորիչներուն Թաղէոս եւ Բարթողիմէոս Առաքեալներուն տօնին առթիւ, ուր պիտի խօսի վարդապետը Հայութեան Լուսաւորութեան մասին: Իսկ երկրորդ թուականին՝ Աւագ Տօներու առթիւ, ուր պիտի խօսուի Առաջին Քրիստոնէութեան Մեծ Դէմքերուն մասին:

**«ՄԱՆԿԱՆՑ ՄՈՄԵՐ»**

Ս. Յվհ. Մկրտիչ Եկեղեցին պէտք ունի զոյգ մը «մանկանց մոմերու», այսինքն մոմով պատած զոյգ մը փայտեայ ձողերու, որոնց վրայ կը ղետեղուին կերտներ, զորս Աւետարանի ընթերցման ատեն, կամ պատարազի պահուն կը կրեն երկու մանուկներ, «մոմ բռնողներ» ինչպէս կ'ըսուի:

Այդ կերտները ղեղեցիկ կերպով կը խորհրդանշեն Աւետարանէն ճառագայթող մտքի եւ հոգիի լոյսը որ

Քրիստոսով վասեցաւ: Իսկ մանուկները կը խորհրդանշեն Աւետարանի ծառաները, «մանուկ»ները ինչպէս Մեր Տէրը կ'ըսէ, որոնց անմեղութիւնը պէտք է ունենալ Աստուծոյ Արքայութիւնը մտնելու համար:

Այս նուիրատուութիւնը ընել ուզողը Եկեղեցիէն պէտք է ստանայ բացատրութիւնները:

**ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ**

**ՏՕՆԵՐ**

Դէպ. 3, շր. Սրբոց Առաքելոց եւ Առաջին Լուսաւորչացի մերոց Թաղէոսի եւ Բարթողիմէոսի:

— 9, ուր. Տօն Յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ:

— 17, շր. Սրբոց Յակոբայ Մծբնայ Հայրապետին եւն:

— 24, շր. Սրբոց Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր Արդար Առաքելոյն:

— 28, բշ. Սրբոյն Ստեփանոսի նախավկային:

— 27, գշ. Սրբոց Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի:

— 29, եշ. Սրբոց Որդւոցն Որոտման, Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին, եւ բարեկեան դան պահոց Ծննդեան:

— 31, շր. Բարսղի Հայրապետին, Գրիգորի Նիւսացւոյն, եւ Սեդրեաւորոսի Հայրապետին:

**Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Ա Մ Ն Ե Ր**

Դէպ. 4, Բ. Կիր. Յիսնակաց:

Եսյ. ԼՁ22-ԼԷ11: Ա. Թսղ. Գ1-11: Ղկս. ԺԳ1—9:

— 11, Գ Կիր. Յիսնակաց.

Եսյ. ԼԷ 14-38: Բ. Թսղ. Ա1-12: Ղկս. ԺԳ 19—24:

— 18, Գ Կիր. Յիսնակաց.

Եսյ. ԼԸ 1-8: Եբր. Ա 1-14: Ղկս. ԺԷ 1—10:

— 25, Ե Կիր. Յիսնակաց.

Եսյ. Խ 18-31: Եբր. Գ 16. Ե10: Ղկս. ԺԸ9—14:

Յնվ. 1, 1939, Կիր. Կաղանդ.

Եսյ. ԾԱ 15-ԾԲ3: Եբր. ԺԳ18-25: Ղկս. ԻԲ24—30:

**ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ՊԱՇՏԱՄԱՆՅ**

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐ**

- Գիշերային եւ ստաւօտեան ժամ. կը սկսի 8-15ին
- Սուրբ Պատարագ » 10-00ին
- Քարոզ » 11-00ին

**ՇԱՐԱԹ ՕՐԵՐ**

- Աւաւօտեան եւ շաշու ժամ. » 9-15ին
- Երեկոյեան կիրակամտի ժամ եւ Հոգեհանգիստ » 16-00ին

**ԼՈՒՐ ՕՐԵՐ**

- Աւաւօտեան ժամ. » 9-15ին
  - Երեկոյեան ժամ. » 1700ին
- Ման.— Մեծ տօներու, տաղաւարներու եւ բացառիկ հանդիսաւոր տօնախմբութեանց ժամերը աւանձինն կը ծանուցուին:

**ՆՈՅՆՄԱՐԵՐԻՆ — ՄԿՐՏԵԱԼՔ**

1. Տէր եւ Տիկին Թ. Թագաւորեանի գաւակը Արիս
2. » » Ե. Դանիէլեանի գաւակը Հայկուհի
3. » » Մ. Մինէլեանի գաւակը Միհրան
4. » » Թ. Ասլանեանի գաւակը Անահիտ
5. » » Վ. Մանուկեանի գաւակը Զարեհ
6. » » » գաւակը Ռուբէն
7. » » Դ. Դանիէլեանի գաւակը Պօղոս
8. » » Յ. Մարտիրոսի գաւակը Տիրուհի
9. » » Փ. Վեպէրի գաւակը Գեորգ
10. » » Հ. Զաքարեանի գաւակը Մանուշակ

**Պ Ս Ա Կ Ե Ա Լ Ք**

1. Պ. Կ. Տէտեան ընդ Օր. Ֆ. Սիվրիսարեանի
2. Պ. Վ. Արգունեան ընդ Օր. Մարի ժան Էվէնցի (գերմ.)
3. Պ. Վ. Շահիտեան ընդ Այրի Տկն. Ս. Պօգայեանի
4. Պ. Ժ. Տէօվլէթեան ընդ Օր. Լ. Գմանեանի
5. Պ. Պ. Ազազարեան ընդ Օր. Ս. Իննէեանի
6. Պ. Պ. Բիրլեան ընդ Օր. Մ. Նալպանտեանի

7. Պ. Թ. Փանոսեան ընդ Օր. Վ. Գըլընեանի
8. Պ. Կ. Հիւտիւքեան ընդ Օր. Շ. Արթինեանի (Ալֆորվիլի եկեղեցի)

**Ն Ն Ջ Ե Յ Ե Ա Լ Ք**

1. Այրի Տկն. Գարակէօզեան, ծն. Մկրտիչեան, Կ. Պալսեցի. 84 տրկ., նյմ. 2ին:
2. Այրի Տկն. Գարագաշեան, ծն. Տէմիրեան, Տրապիզոնցի, 81 տրկ., նյմ. 2ին:
3. Կ. Վէմեան, Զմիւռնիացի, 80 տրկ., նյմ. 7ին:
4. Այրի Տկն. Մ. Պետրոսեան, ծն. Կատիմեան, Կ. Պալ. 87 տրկ. նյմ. 14ին:
5. Թ. Շամլեան, Կ. Պալսեցի, 46 տրկ. նյմ. 16ին:
6. Տէր. Կ. Խանեան, 73 տրկ. Էտիրնէցի, նյմ. 21ին:
7. Ք. Աւագեան, Բազէշցի. 52 տրկ. 16 նյմ. ին, Արմու. վիլի Վարագայ Ս. Խաչ եկեղեցիին մէջ:
8. Ս. Պատակօֆ, Աստրախանցի, 76 տրկ. նյմ. 29ին:
9. Ռ. Փափագեան, Էտիրնէցի, 77 տրկ. նյմ. 29ին:
10. Արշի տկն. Գ. Համբարձումեան, Մե, Նոր-Գիւղցի, (Պրուսա) 72 տրկ. նյմ. 26ին:

**Հ Ո Գ Ե Հ Ա Ն Գ Ի Ս Տ**

1. Կ. Պալպանեանի. 2. Յ. Զուպուֆերեանի. 3. Գ. Մա. հիրեանի, 4. Ս. Յակոբեանի. 5. Փոքրիկն Տիանա Ֆրէնկեանի եւ Տկն. Ս. Ֆրէնկեանի. 6. Տկն. Ե. Ճէվա. հիրեանի. 7. Յ. Արընեանի. 8. Ա. Մուրատեանի:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

*Փարիզեան Շրջանակի (Région parisienne) ժէջ գտնուող մեր վիճակայիններուն համար կանոնաւոր բաժանորդագրութիւն չունինք: Կրցողներէն կ'ակնկալենք կամաւոր օժանդակութիւն՝ թերթը շարունակել, եւ վճարել չկրցողներու ալ զայն ղրկել կարենալու համար: Փարիզեան շրջանակէն դուրս՝ Յրանաայի համար բաժնեկիներն է 20 ֆրանք. իսկ արտասահմանի համար՝ 3 շիլին կամ համարժէքը:*

Թերթիս եղած նուիրատուութիւնները կը ծանուցանենք ուրիշ թիւի մը մէջ: